



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՎԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՖՈՐԵՍԹ ԼՈՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ



Ուրբաթ, 4 Մարտի
յետմիջօրեին, Թեմիս
բարեխնամ Առաջնորդ
Բարձր. Տ. Մուշեղ Արք.
Մարտիրոսեան ընդունեց
այցելութիւնը «Ֆորեսթ Լոն»
հաստատութեան
ներկայացուցիչներուն՝
Տեարք Տերին Տրեպինկ
(աւագ գործադիր տնօրէն),
Աքաթ Տրուլթ (աւագ փոխ
նախագահ) եւ Տիկին
Ռիլմա ճոանիս (Հոլիվուտ
Հիլզի Ֆորեսթ Լոնի փոխ

տնօրէն): Հանդիպումին ներկայ եղաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր
հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Զինյ. Աբմաճեան:

Ներկայացուցիչները Առաջնորդ Սրբազանին որոշ տեղեկութիւններ
տուին հաստատութեան աշխատանքներուն եւ ծրագիրներուն մասին,
միաժանակ պատրաստակամութիւն յայտնելով իրենց ծառայութիւններուն
ծիրին մէջ օգտակար ըլլալու հայ համայնքի զաւակներուն եւ այս
ուղղութեամբ գործակցելու Ազգ. Առաջնորդարանին ու մեր եկեղեցիներուն
հետ:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց հաստատութեան
պատասխանատուներուն այս բարի տրամադրութիւնները եւ
գոհունակութիւն յայտնեց գործակցութիւնը ընդարձակելու անոնց
պատրաստակամութեան համար:

PRELATE WELCOMES REPRESENTATIVES OF FOREST LAWN MORTUARIES

On Friday, March 4th, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy representatives from Forest Lawn Mortuaries Mr. Darin Drabing (Executive Vice-President), Mr. Scott Drolet (Senior Vice-President), and Mrs. Wilma Joanis (Vice-President of Hollywood Hills Forest Lawn). Rev. Fr. Vazken Atmajian participated in the meeting.

The representatives reported on the programs and services they provide, and also expressed their readiness to collaborate with the Prelacy and churches to assist the Armenian community.

The Prelate commended the representatives for their service, and expressed appreciation for their long-standing friendship, collaboration, and support of the Armenian community.